

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԱՍՈՒԴ ԷՆԹԵԶԱՐԻ ՅԱԶԴԻ

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԽՈՇՈՐ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
(ԹԵՀՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ղանթարջյան Սարգիս Լևոնի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Է.Ն.Օրդյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Կ.Գ.Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2017թ. հուլիսի 7-ին
ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի
Տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Արշակունյաց 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունիսի 6-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝
Ա.Հ.Առաքելյան



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության մեջ յուրաքանչյուր երկիր իրեն բնորոշ յուրահատկություններով առանձնանում է մյուսներից: Այսպես՝ ծովային ելք չունեցող երկրներն ունեն իրենց բնորոշ հիմնախնդիրները, լեռնային երկրները՝ այլ հիմնախնդիրներ, հյուսիսային երկրներին բնորոշ է զարգացման մի մակարդակ, հարավայիններին՝ մեկ այլ (որպես կանոն՝ ավելի ցածր զարգացման մակարդակ, քան հյուսիսային երկրներինն է) և այլն: Բոլոր այս գործոններն իրենց ուրույն ազդեցությունն են թողնում տվյալ երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական կերտվածքի, և տնտեսական անվտանգության վրա: Ուստի անհրաժեշտություն է առաջանում կառավարչական մեխանիզմների կիրառման միջոցով հնարավորինս արդյունավետորեն օգտագործել այս գործոնների դրական ազդեցությունները և չեզոքացնել բացասականները: Սակայն կառավարման յուրաքանչյուր գործընթաց կարող է տարածվել միայն որոշակի սահմանների շրջակայքում. պետական կառավարումը տարածվում է երկրի պետական սահմանների ներսում, տարածքային կառավարումը՝ դրա որոշակի առանձնացված մասերում, իսկ տեղական ինքնակառավարումը՝ էլ ավելի նեղ շրջանակներում:

Այսպիսով, առավել արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտություն է առաջանում վարչատարածքային բաժանման, որը ենթադրում է երկրի տարանջատումը որոշակի վարչական միավորների (շրջաններ, մարզեր, համայնքներ և այլն) և պետական կառավարման որոշակի գործառույթների փոխանցումը տվյալ միավորի կառավարմամբ զբաղվող մարմինին:

Տարբեր երկրներում, որպես կանոն, սահմանադրությամբ ամրագրվում են վարչական միավորների վերահսկողության և կառավարման համար պատասխանատու մարմիններն ու նրանց իրավասություններն ու պարտավորությունները: Փաստացի տեղական ինքնակառավարման երևույթը եղել է դեռևս անտիկ ժամանակներից, թեպետ արտահայտվել է տարբերայնորոն: Ինքնակառավարում հասկացության առաջին անգամ կիրառումը գիտական գրականության մեջ կապում են պրուսական նախարար Հենրիխ ֆոն Շտայնի անվան հետ:

Ներկայումս տնտեսագիտական գրականության մեջ շրջանառվում են տեղական ինքնակառավարման բազմաթիվ բնորոշումներ: Համաձայն Օքսֆորդի տնտեսագիտական բառարանի՝ տեղական ինքնակառավարումը քաղաքի որոշակի հատվածի կառավարումն է այդտեղ բնակվող անձանց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով:

Բնականաբար տեղական ինքնակառավարումը զալիորեն տարբերվում է նախ՝ կախված այն հանգամանքից՝ քաղաքը փոքր է, թե մեծ և յուրաքանչյուրի համար արդյունավետ տեղական ինքնակառավարում ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ քաղաքի և դրա վարչական շրջանների առանձնահատկությունները:

Իրանի Իսլամական Հանրապետությունում (ԻԻՀ) և մասնավորապես՝

Թեհրան քաղաքում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը ընտրական ճանապարհով դեռևս նոր երևույթ է և կարիք ունի բավական մանրագնին ուսումնասիրության: Մինչ օրս Թեհրան քաղաքում տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովման նկատառումներով բազմիցս իրականացվել են վարչական շրջանների խոշորացման և տարանջատման միջոցառումներ: Սակայն, այդուհանդերձ, ներկայումս Թեհրան քաղաքային ագլոմերացիան կանգնած է նոր մարտահրավերի առջև՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կեսից ավելին սնանկացման եզրին են: Ուստի այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում շուտափույթ վերլուծություն իրականացնել Թեհրանի ՏԻՄ-երի գործունեության թեր և դեմ կողմերի բացահայտման նկատառումներով և բացահայտել գործունեության անարդյունավետության պատճառներն ու մշակել դրանց շտկման ուղիներ, ինչպես նաև առաջարկել հետագա զարգացման հնարավոր հեռանկարային ուղղություններ: Այս հանգամանքով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

ՏԻՄ գործունեության արդյունավետության գնահատմանն անդրադարձել են տնտեսագիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչներ՝ սկսած դասականներից մինչ մերօրյա տնտեսագետները: Հիմնախնդրի քննարկման հարցում իրենց զգալի ավանդն են ունեցել նաև իրանցի տնտեսագետները՝ Աշդար Աբոլհասանի Հաստիանին, Շոկրալլահ Բանարը, Մուխտար Հաշեմին, Մոհամադ Հադի Ջավիդը և այլք:

Արենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել տեղական ինքնակառավարման կատարելագործման ուղիները խոշոր քաղաքային համայնքներում և առաջարկել Թեհրան քաղաքի ՏԻՄ գործունեության բարելավման ուղիներ: Այդ նպատակներին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տեղական ինքնակառավարման համակարգի տեսական հիմնադրույթները,
- վերլուծել տեղական ինքնակառավարման համակարգի վրա ազդող գործոնները,
- ներկայացնել ՏԻՄ գործունեության առանձնահատկությունները խոշոր քաղաքային համայնքներում,
- համակարգել խոշոր քաղաքային համայնքներում բյուջեի ձևավորման և տնօրինման տարբեր երկրների փորձը,
- իրականացնել աշխարհի 30 խոշորագույն քաղաքների ՏԻՄ գործունեության համեմատական վերլուծություն,
- դուրս բերել խոշոր քաղաքային համայնքներում ՏԻՄ գործունեության արդյունավետ մեթոդները,
- քննարկել տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության տեսա-մեթոդական հիմքերը,
- մշակել ՏԻՄ արդյունավետության բացահայտման գործնականում կիրառելի եղանակներ,
- դիտարկել ՏԻՄ գործունեության առանձնահատկությունները ԻԻՀ-ում և

Թեհրանում,

- վերլուծել Թեհրանում ՏԻՄ ծառայություններից բնակչության բավարարվածության աստիճանը,
- գնահատել Թեհրանի ՏԻՄ գործունեությունը՝ ըստ ծախս-արդյունք մեթոդի,
- մշակել Թեհրանի ՏԻՄ-երի բյուջեի ձևավորման և ծախսերի արդյունավետության բարձրացման ուղիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում տեղական ինքնակառավարման կատարելագործումը խոշոր քաղաքային համայնքներում, իսկ հետազոտության առարկա՝ Թեհրանի ՏԻՄ գործունեության բարելավումը:

Արենախոսության տեսական, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել իրանցի և արտասահմանյան տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, տնտեսագիտական դասական և արդի տեսությունները, ԻԻՀ Կենտրոնական բանկի և Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, Ներքին գործերի նախարարության հրապարակումները, քաղաքապետարանի և այլ պաշտոնական աղբյուրների էլեկտրոնային ռեսուրսները, ինչպես նաև սեփական հարցումների հիման վրա ստացված արդյունքները:

Արենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները: Արենախոսության շրջանակում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Գրականության վերլուծության հիման վրա ընտրվել է ՏԻՄ գործունեությունից բնակչության բավարարվածության մակարդակը գնահատող սոցիալական հարցում իրականացնելու մեթոդաբանություն, որը կատարելագործվել է՝ հաշվի առնելով Թեհրան քաղաքի ՏԻՄ առանձնահատկությունները՝ Թեհրան քաղաքում ՏԻՄ գործունեության արդյունավետության առավել ճշգրիտ բացահայտման նպատակով:
- Իրականացվել է Թեհրանի ՏԻՄ գործունեությունից բնակչության բավարարվածության գնահատմանը և ՏԻՄ գործունեության արդյունավետության բացահայտմանն ուղղված հարցում Թեհրանի ամենամեծ և ամենափոքր բնակչություն ունեցող շրջաններում և առաջարկվել են Թեհրանի ՏԻՄ-երի գործունեության հետագա բարելավման ուղիներ:
- Բացահայտվել է Թեհրանի ամենամեծ և ամենափոքր բնակչություն ունեցող շրջաններում ՏԻՄ բյուջեից իրականացվող ծախսերի և բնակչության գոհունակության աստիճանի միջև փոխկապվածությունը և առաջարկվել է ՏԻ կողմից ոչ արդյունավետ իրականացվող գործառույթների կարգավորմանն ուղղված միջոցառումներ:
- Ելնելով Թեհրան քաղաքի ՏԻՄ բյուջեների եկամուտների ձևավորման այլընտրանքային աղբյուրների անհրաժեշտությունից՝ տարանջատվել են Թեհրանում գործող ՏԻՄ-երի տեսակներն՝ ըստ ֆինանսական վիճակի և

մշակվել են դրանցից յուրաքանչյուրի համար այլընտրանքային ֆինանսավորման ձևեր ու լծակներ:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսությունում ներկայացված ՏԻՄ գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումները կարող են օգտակար լինել հետագա տնտեսական քաղաքականության մշակման համար, մասնավորապես՝ խոշոր քաղաքային համայնքներում ՏԻՄ գործունեության առանձնահատկությունների բնույթը, ՏԻՄ արդյունավետության գնահատման տեսա-մեթոդական մշակումները, դրանք Թեհրանում տեղայնացնելու համար անհրաժեշտ փոփոխությունների իրականացումը և այլն կարող են օգտակար լինել բուհական համակարգում համապատասխան առարկաների գծով դասընթացների ծրագրերի հետագա բարելավման և լրացման համար:

Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են օգտակար լինել նաև հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետների, պետական կառավարման մարմնի ՏԻՄ գործունեության համար պատասխանատուների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար:

Արենախոսության արդյունքների հրապարակումը: Հետազոտության հիմնական արդյունքները ամփոփվել են ատենախոսության ուսումնասիրության շրջանակներում հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական աշխատություններում: Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտի, ինչպես նաև Նորարարական զարգացման եվրոպական ֆոնդի գիտաժողովներում, ինչպես նաև ԵՊՀ Կառավարման և գործավարության ամբիոնի շրջանակներում:

Արենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, պարունակում է 2 նկար, 6 գծապատկեր, 12 աղյուսակ: Ատենախոսությունը շարադրված է 161 մեքենագիր էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը և հետազոտման հրատապությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, հստակեցվում են հետազոտության օբյեկտը և առարկան, հակիրճ ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Արենախոսության առաջին գլխում համակարգվում են տնտեսագիտական գրականության մեջ առկա տեղական ինքնակառավարման համակարգի էությունը մեկնաբանող տեսությունները, բնորոշվում են խոշոր քաղաքային համայնքներում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները, ներկայացվում է խոշոր քաղաքային համայնքներում բյուջեի ձևավորման և օգտագործման փորձը, ինչպես նաև վերլուծվում են տեղական ինքնակառավարման համակարգի վրա ազդող գործոնները:

Փաստացի տեղական ինքնակառավարման երևույթը եղել է դեռևս անտիկ ժամանակներից, թեպետ արտահայտվել է տարբերայնորոն: Ինքնակառավարում հասկացության առաջին անգամ կիրառումը գիտական գրականության մեջ կապում են պրուսական նախարար Հենրիխ ֆոն Շտայնի անվան հետ. նա ինքնակառավարումը համարում էր ավելին, քան պարզապես տեղական մակարդակում պետության կառավարման գործում քաղաքացիների մասնակցության ձև¹:

Ֆրանսիայում տեղական կառավարումը լայնորեն կիրառում ստացավ 1793թ.-ից, երբ Սահմանադրությամբ ամրագրվեցին համայնքները, որոնց սահմանազատումն իրականացվում էր եկեղեցական ծխերի և մեծ գյուղերի հիման վրա²: 19-րդ դարում, երբ մեծ թափով զարգանում էր արդյունաբերությունը, առավել արդյունավետ կառավարում ապահովելու համար անհրաժեշտություն առաջացավ քաղաքներին տալ որոշակի ինքնուրույնություն: Այս ամենի արդյունքում շատ քաղաքներ ստացան իրավաբանական անձի կարգավիճակ և սեփականություն ունենալու և տնօրինելու հնարավորություն ստացան³: Հայտնի տնտեսագիտական բառարաններում տեղական ինքնակառավարումը սահմանված է հետևյալ կերպ. համաձայն Օքսֆորդի տնտեսագիտական բառարանի՝ տեղական ինքնակառավարումը քաղաքի որոշակի հատվածի կառավարումն է այդտեղ բնակվող անձանց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով⁴, դրան որոշակիորեն լրացնելու է գալիս Քեմբրիջի տնտեսագիտական բառարանում առկա սահմանումը, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարումը տվյալ տարածքում բնակվող անձանց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով այդ տարածքի վերահսկողությունը, կազմակերպումը և դրանց ուղեկցող ծառայությունների մատուցումն է⁵:

Տեղական ինքնակառավարման երևույթը ուսումնասիրվել է տարբեր տնտեսագիտական դպրոցների կողմից, ինչի արդյունքում էլ առաջ են եկել այն մեկնաբանող տարբեր տեսություններ:

Աղյուսակ 1.1.1-ում ներկայացված են տեղական ինքնակառավարման վերաբերյալ հիմնական տեսություններն ու նրանց հակիրճ բնորոշումները: Առհասարակ տարբեր երկրներում տեղական ինքնակառավարմանը բնորոշ է բազմաթիվ գործառույթների իրագործում: Ամփոփելով տնտեսագիտական գրականությունում առկա գաղափարները՝ ներկայացնենք այդ գործառույթներից ամենատարածվածները:

Տեղական ինքնակառավարման կարևորագույն գործառույթներն են՝ կառավարչական գործառույթը⁶, համայնքի զարգացման գործառույթն է⁷, բնակչությանը առողջությանն ու շրջակա միջավայրին առնչվող

¹ Leonard A. CURCHIN, THE ROLE OF CIVIC LEADERS IN LATE ANTIQUE HISPANIA, Studia Historica, Historica Antigua, University of Waterloo, 2014, pp. 281-304

² Ashford D.E. British Dogmatism and French pragmatism: Central-local Policymaking In the Welfare State. L.: Allen & Unwin, 1982. -XII

³ . Rhodes R. A. W. Control and Power in Central Local Government Relations Farnborough 1981 c. 97-108

⁴ Black J., Hashimzade N. and Myles G., A Dictionary of Economics. Oxford University Press, 2009. Oxford Reference Online. Oxford University Press. Austin Public Library, 11 November 2011.

⁵ <http://dictionary.cambridge.org/dictionary/british/local-government>

⁶ Parrado Salvador, Assigning competences and functions to local self-government in four eu member states: a comparative review, Support for Improvement in Governance and Management A joint initiative of the OECD and the European Union, principally financed by the EU, Madrid, 2005, p.5-10

⁷ Metropolitan Local Government Review, Functions of local government, Australia 2003, p.7

ծառայությունների մատուցումը⁸, տրանսպորտին և հարակից ենթակառուցվածքներին առնչվող ծառայությունների մատուցումը⁹:

Աղյուսակ 1.1. 1

Տեղական ինքնակառավարումը մեկնաբանող տեսությունների բնորոշումները

Տեսության անվանումը	Հիմնական գաղափարը	Կողմնակիցներ
Համայնքային (Ազատ համայնքի) տեսություն	Համայնքը օժտված է տեղական նշանակության խնդիրների լուծման բնական իրավունքով	Ա. Տոկվիլ ¹⁰ , Ժ. Տուրբե ¹¹ , Է. Մայեր ¹²
Հասարակական (Կառավարչական) տեսություն	Պետական և համայնքային գործերի հստակ տարանջատում	Օ. Ռասսել, Ռ. Ֆոն Մոլ, Օ. Գիրկե, Ռ. Բիշ ¹³ , Է. Օստրոմ ¹⁴ , Վ. Օստրոմ ¹⁵
Պետական տեսություն	Համայնքի գործերը հանդիսանում են պետական գործերի անբաժան մասը, որոնց իրագործումը փոխանցվել է տեղական ինքնակառավարման մարմին	Ռ. Ֆոն Գայսս ¹⁶ ,
Իրավաբանական տեսություն	Համայնքը պետք է ունենա իրավաբանական անձի կարգավիճակ	Լ. Ֆոն Շտեյն ¹⁷
Դուալիստական տեսություն	Տեղական ինքնակառավարումն ունի և՛ հանրային, և՛ պետական բնույթ	Պ. Սաունդերս, Ա. Կոլսոն ¹⁸

Ներկայիս կյանքի ամենաուշագրավ առանձնահատկություններից մեկը քաղաքների և քաղաքաբնակ բնակչության թվաքանակի զգալի աճն է: Խոշոր քաղաքներ եղել են դեռևս միջնադարյան Չինաստանում: 19-րդ դարում յուրաքանչյուր քաղաքում բնակվում էր նվազ քան 1մլն մարդ, 1950թ. 5մլն-ից ավելի բնակչություն ունեցող 8 քաղաք կար արդեն, իսկ այժմ դրանց թիվը հասնում է 40-ի¹⁹:

Ներկայումս ՄԱԿ-ի դասակարգմամբ քաղաք են համարվում 20 հազարից ավելի բնակչություն ունեցող բնակավայրերը²⁰: Համաձայն ՄԱԿ-ի մեթոդաբանության ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետությունում քաղաք է համարվում ցանկացած բնակավայր, որն ունի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմին²¹:

Խոշոր քաղաքային ագլոմերացիա հասկացությունն առաջացել է լատինական agglomerato (միավորում եմ) բառից և իրենից ներկայացնում է որոշակի

⁸ Municipal Demarcation Board, Local government powers and functions – definitions, norms and standards, March/April 2003 p.25-26

⁹ Steytler Nico, Fessha Yonatan, Defining provincial and local government powers and functions: the management of concurrency, Local Government Project, Community Law Centre, University of the Western Cape, 2005, p. 18

¹⁰ Tocqueville, Alexis de (2000). Democracy in America. Chicago: The University of Chicago Press. p. 13

¹¹ Thourret Jacques-Guillaume, [Texte du discours du 24 mars 1790 sur la reorganisation du pouvoir judiciaire](#), p. 25

¹² Berman H. J., Law and Revolution: The Formation of the Western Legal Tradition, HARVARD UNIVERSITY PRESS, Cambridge, Massachusetts and London, England, 1983, p. 233

¹³ Bish, Robert L. "Federalist theory and polycentricity: Learning from Local Government" In limiting Leviathan, edited by Donald P. Racheter and Richard E. Wagner, Cheltenham, U.K., 1999, p. 203-220.

¹⁴ ¹⁴ Ostrom, Elinor (1990). Governing the Commons: The Evolution of Institutions for Collective Action. [Cambridge University Press](#)

¹⁵ Ostrom, Vincent. The Intellectual Crisis in American Public Administration. University, Ala.:University of Alabama Press, 2008

¹⁶ Gneist R., [Selfgovernment, Politics and government, Constitutional history, Great Britain](#),

¹⁷ [Christian Rosser](#), Examining Frank J. Goodnow's Hegelian Heritage: A Contribution to Understanding Progressive Administrative Theory, Administration & Society November 2013 45: 1063-1094

¹⁸ Brian Crisp, The Rigidity of Democratic Institutions and the Current Legitimacy Crisis in Venezuela, Latin American Perspectives, Vol. 23, No. 3, Postbonanza Venezuela (Summer, 1996), pp. 30-49

¹⁹ Jones, Gavin W., Urbanization trends in Asia: the conceptual and definitional challenges, 2004

²⁰ United Nations, World urbanization prospects: The 2001 revision-Data table and highlights, 2002, op. cit, New York

²¹ http://unstats.un.org/unsd/demographic/sconcerns/densurb/Defintion_of%20Urban.pdf

բնակավայրերի միավորում կամ սերտաճում որպես մեկ միասնական համակարգ, որն ունի արտադրական, տրանսպորտային և մշակութային մեծ ներուժ²²: Օրինակ՝ Տոկիոյի քաղաքային ագլոմերացիան ներառում է Չիբա, Կավասակի, Յոկոհամա և այլ քաղաքներ:

Խոշոր քաղաքները և քաղաքային ագլոմերացիաները, սակայն, ունեն մի հետաքրքիր յուրահատկություն, դրանք բավական բարդ համակարգեր են հանդիսանում կառավարման տեսանկյունից: Համաձայն ՄԱԿ-ի ՀԱԲԻԹԱԹ-2 համաշխարհային գիտաժողովի տվյալների՝ 20-րդ դարավերջին առկա 2003 խոշոր քաղաքների և քաղաքային ագլոմերացիաների շարքում միայն 22-ն ունեին կառավարման արդյունավետ համակարգ²³:

Ընդհանրացնելով մասնագիտական գրականության մեջ եղած տեսակետները՝ կարող ենք ասել, որ խոշոր քաղաքներում և քաղաքային ագլոմերացիաներում տեղական ինքնակառավարումն իրականացվում է հիմնականում 3 մոդելով՝ միաստիճան, երկաստիճան և խառը: Մոդելների այսպիսի տարանջատումը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմնի իրավունքների և պարտավորությունների կենտրոնացվածության աստիճանով:

Տեղական ինքնակառավարումը Եվրոպայում սկսեց զարգանալ 1950-ական թվականներից և աստիճանաբար սփռվեց ողջ Եվրոպայի տարածքով²⁴: Դրանից մոտ 30 տարի անց՝ 1985թ. հոկտեմբերի 15-ին, Ստրասբուրգում ընդունվեց «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան»²⁵, համաձայն որի՝ ՏԻՄ-երը իրենց գործունեությունը ծավալելու համար պետք է իրենց տնօրինության ներքո ունենան բավարար ֆինանսական միջոցներ:

Հիմնվելով “Demographia World Urban Areas, 11th Annual Edition:2015:01” պարբերականի կողմից 2015 թ. աշխարհի տարբեր քաղաքներում բնակչության թվաքանակի կանխատեսումների վրա՝ վերլուծության մեջ ընդգրկել ենք աշխարհի 30 խոշորագույն քաղաքներ կամ քաղաքային ագլոմերացիաներ՝ ըստ բնակչության թվի (ըստ նշյալ պարբերականի), որոնք ներկայացնում են զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրները:

Վերոնշյալ 30 խոշորագույն քաղաքների ՏԻՄ գործունեության վարլուծության արդյունքում կարող ենք նշել այն հանգամանքները, որոնք բնորոշ են հատկապես խոշոր քաղաքների ՏԻՄ-երին և ազդում են դրանք գործունեության արդյունավետության վրա՝ բնակչության և տարածքի մեծություն, ՏԻՄ-հասարակություն համագործակցության համար էլեկտրոնային ռեսուրսների կիրառում²⁶, հարկային մուտքերի «անարդարացի» բաշխում, մրցակցություն ֆինանսական նախապատվության արժանանալու համար, վարկեր և

²² <http://www.unicef.org/sowc2012/pdfs/SOWC-2012-DEFINITIONS.pdf>

²³ UN, UNITED NATIONS CONFERENCE ON HUMAN SETTLEMENTS (HABITAT II), A/CONF.165/14, 7 August 1996, p. 46

²⁴ Schuster W., Vallier F., Local and regional government in Europe-Structures and competences, CCRE&CEMR-2013, p.3


²⁵ EUROPEAN CHARTER OF LOCAL SELF-GOVERNMENT, Article 9, Strasbourg, 15.X.1985

²⁶ Այս գործոնն առանձնացրել ենք խոշոր քաղաքների ՏԻՄ գործունեության արդյունավետության վրա ազդելու տեսանկյունից, քանի որ փոքր քաղաքներում բնակչության թվաքանակն ու տարածքն ավելի փոքր են, համեմատաբար ավելի դյուրին է կառավարելը, սակայն մաս կա մեկ այլ էական հանգամանք՝ հնարավոր է, որ փոքր քաղաքներում էլեկտրոնային համագործակցության զարգացման համար ներդրված գումարները ՏԻՄ գործունեության արդյունավետության վրա մեծ ազդեցություն չունենան և ֆինանսապես չարդարացնեն իրենց, մինչդեռ խոշոր քաղաքներում որքան բարձր մակարդակի վրա գտնվի ՏԻՄ-հասարակություն էլեկտրոնային հաղորդակցությունը, այնքան ավելի արագ և արդյունավետ հնարավոր կլինի արձագանքել առկա խնդիրներին:

փոխառություններ ստանալու սահմանափակումներ²⁷, ոչ առաձգական հարկահավաքման մեխանիզմ:

Այսպիսով՝ վերլուծության ընթացքում մենք պարզեցինք ՏԻՄ գործունեության արդյունավետության վրա ազդող գործոններն ընդհանրապես և խոշոր քաղաքային համայնքներում՝ մասնավորապես: որոնք էլ հաշվի կառնենք ատենախոսության հետագա շարադրանքում Թեհրան քաղաքի ՏԻՄ արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ մշակելիս:

Արենախոսության երկրորդ գլխում քննարկվում են տեղական ինքնակառավարման արդյունավետության տեսա-մեթոդական հիմքերը, ինչպես նաև վերլուծվում են խոշոր քաղաքներում ՏԻՄ կողմից կիրառվող արդյունավետ մեթոդները: Առհասարակ ինչպես ցանկացած գործունեության գնահատում, այնպես էլ տեղական ինքնակառավարման գնահատումն իրենից ներկայացնում է «գործունեություն-արդյունքայնություն-արդյունավետություն» ամբողջական շղթայի վերլուծությունը²⁸: Բավական դժվար է գործնականում գնահատել պետական կառավարման համակարգի, այդ թվում և՛ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը, քանի որ գոյություն չունի մեկ ընդհանուր չափանիշ, որ ընդունելի կլինի բոլոր համար:



Գծապատկեր՝ 2.1.1. Պետական կառավարման գործունեության գնահատման բաղադրարարները²⁹

Որպես պետական կառավարման գործունեության գնահատման համակարգ սովորաբար կիրառում են հատուկ սոցիալական արդյունավետության չափանիշները (գծապատկեր 2.1.1.), որոնք ուղղված են լինում հետևյալ 5 հարցի բացահայտմանը³⁰՝ ուղղվածություն, տևողություն, գործելաճ, գործունեության կազմակերպում, ծախսեր:

Սովորաբար տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության գնահատումն իրականացվում է տարեկան 1 անգամ՝ հաշվի առնելով երկրում գործող բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունները: ՏԻՄ-երի աշխատանքի գնահատումն իրականացվում է 3 ուղղությամբ՝ ըստ ընտրված ցուցանիշների ձեռք բերված մակարդակի, ըստ ցուցանիշների աճի կամ նվազման տեմպերի և որ ամենակարևորն է՝ ըստ բնակչության կողմից ՏԻՄ աշխատանքներին տրված գնահատականի, որի բացահայտման նպատակով իրականացվում են

²⁷ Escola de Governo (2014 г.). [urgente renegociar a dívida de São Paulo. Материал представлен по адресу: . Материал получен с сайта 2 ноября 2014 г

²⁸ Antgnio Afonso and Sgnia Fernandes, Assessing and Explaining the Relative Efficiency of Local Government: Evidence for Portuguese Municipalities, November 2005, p. 7-12

²⁹ Afonso, A.; Schuknecht, L. and Tanzi, V., Public Sector Efficiency: An International Comparison, Public Choice, 123 (3-4), 2005, pp. 321-347

³⁰ Afonso, A.; Schuknecht, L. and Tanzi, V., Public Sector Efficiency: An International Comparison, Public Choice, 123 (3-4), 2005, pp. 321-347

սոցիալական հարցումներ: Ցուցանիշների համակարգը սովորաբար ներառում է ամփոփ ցուցանիշներ հետևյալ ուղղությունների վերաբերյալ³¹. տնտեսական զարգացում, նախադպրոցական, ընդհանուր և լրացուցիչ կրթական հաստատություններ, մշակույթ, սպորտ, բնակարանաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, տեղական ինքնակառավարման կազմակերպում, էներգետիկ արդյունավետության բարձրացում:

Կախված երկրի առանձնահատկություններից՝ ընտրվում են այս կամ այն ոլորտը բնութագրող ցուցանիշների համապատասխան քանակություններ, որոնց գնահատման համար էլ ընտրվում է գնահատման համապատասխան չափանիշ (որպես կանոն ընտրվում է 1-5 բալանոց համակարգով գնահատում), ինչպես նաև ընդգրկվում է «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը: Յուրաքանչյուր հարցի համար հաշվարկվում է բնակչության բավարարվածության միջանկյալ ցուցանիշ՝ հարցին տված պատասխանների թվաքանական միջինի հաշվարկման միջոցով.


$$\text{Բնակչության բավարարվածության միջանկյալ ցուցանիշ}_i = \frac{5 \cdot a + 4 \cdot b + 3 \cdot c + 2 \cdot d + 1 \cdot e}{a + b + c + d + e}$$

որտեղ բնակչության բավարարվածության միջանկյալ ցուցանիշ-ն i-րդ հարցի պատասխանների արդյունքում հաշվարկվող միջին ցուցանիշն է, a-ն տվյալ հարցի մասով իրենց բավարարվածության աստիճանը «5» գանահատած հարցվողների քանակը, b-ն՝ տվյալ հարցի մասով իրենց բավարարվածության աստիճանը «4» գանահատած հարցվողների քանակը, c-ն՝ տվյալ հարցի մասով իրենց բավարարվածության աստիճանը «3» գանահատած հարցվողների քանակը, d-ն՝ տվյալ հարցի մասով իրենց բավարարվածության աստիճանը «2» գանահատած հարցվողների քանակը, e-ն՝ տվյալ հարցի մասով իրենց բավարարվածության աստիճանը «1» գանահատած հարցվողների քանակը: Յուրաքանչյուր հարցի պատասխանների հիման վրա բնակչության բավարարվածության միջանկյալ ցուցանիշի հաշվարկումից հետո, հաշվարկվում է վերոնշյալ 6 (կամ ավելի՝ կախված երկրի կամ վարչատարածքային միավորի առանձնահատկությունից) բաժիններից յուրաքանչյուրի մասով բնակչության բավարարվածության ընդհանուր ցուցանիշը՝ միջին թվաքանականի միջոցով:

Ամփոփելով տնտեսագիտական գրականությունում³² առկա վերլուծությունները՝ ներկայացնենք տեղական բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրները և օգտագործման ուղղությունները՝ անկախ ՏԻՄ մոդելից (գծապատկեր 2.2.1.):

³¹ Deller, S. "Production Efficiency in Local Government: A Parametric Approach", Public Finance, (1992). 47 (1), pp. 32-44

³² Balancing protection and opportunity. A strategy for social protection in transition economics. WB. 2000, Chapman K. 1995 Canadian Regionalism and Provincialism: An Evaluation of the Socio-Economic Well-Being of Canada, Geography Department thesis, Wilfrid Laurier University



Գծապատկեր 2.2.1. ՏԻՄ բյուջեի ձևավորման և տնօրինման ուղղությունները

Հարկային համակարգը Կանադայում բաղկացած է դաշնային, նահանգային և տեղական հարկերից: Կանադայում և՛ պետական, և՛ տեղական իշխանությունները բավականին մեծ իրավասություններ ունեն հարկահավաքման և դրույքերի սահմանման գործում՝ կախված նրանից, թե երկրի որ ՏԻՄ-ին է խոսքը վերաբերում, առավել մեծ իրավասություններ տրված են խոշոր քաղաքային համայնքների ՏԻՄ-երին³³:

Գերմանիայում ևս առկա է ՏԻՄ-երի խառը տիպի մոդելը, ուստի այստեղ ևս հարկման բազայի և դրույքաչափերի մասին որոշումներ կայացնում են երբեմն պետական իշխանությունները, երբեմն՝ տեղական³⁴: Լիխտենշտեյնում տարածված տեղական հարկերից և ոչ հարկային եկամուտներից են եկամտահարկը, շուն պահելու հարկը և այլն³⁵:

Լեհաստանում ՏԻՄ-երին բացի հարկահավաքման իրավունքից վերագրված է նաև իրենց որոշմամբ տեղական հարկերի վճարումից ազատելու իրավունք:

Էստոնիայում ՏԻՄ-երը բացի տեղական հարկերից եկամուտ են ստանում նաև պետական բյուջեից ստացվող հարկային մասնաբաժինների տեսքով³⁶:

Բուլղարիայում տեղական բյուջեի հարկային եկամուտները 3-ն են՝ ունեցվածքի հարկը, ժառանգության հարկը, ավտոմեքենայի հարկը, որոնց դրույքաչափը սահմանվում է պետական մակարդակով:

Աղյուսակ 2.2.2-ում ներկայացված են մի քանի երկրների տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները:

³³ Graham KA, Phillips SD & Maslove AM. 1998. Urban Governance in Canada: Representation, Resources and Restructuring. Toronto: Harcourt Canada.

³⁴ Գերմանիան բաժանված է 16 Հողերի (Land) և ունի բազմաթիվ տեղական ինքնակառավարման մարմիններ: Յուրաքանչյուր Հող ունի առանձին Սահմանադրություն և տեղական ինքնակառավարման մասին օրենսդրություն:

³⁵ Joumard I. Tax System in European Union Countries // OECD Economics Department Working Paper, 2001, N 301

³⁶ Local Government Budgeting: Estonia, Dag Ainsoo, Georg Sootla, 2007, p. 86

Աղյուսակ 2.2.2. ՏԻ և ՏԿ լիազորությունների շրջանակը մի քանի երկրներում³⁷

Երկրներ	Մանկապարտեզներ	Տարրական կրթություն	Միջնակարգ կրթություն	Սոցիալական ապահովություն	Առողջապահություն	Մշակույթ և սպորտ	Ջրամատակարարում և աղբահանություն	Էլեկտրամատակարարում	Հասարակական տրանսպորտ	Քաղաքային պլանավորում	Տեղական ոստիկանություն	Այլ
Կանադա ³⁸					✓	✓	✓		✓	✓	✓	✓
Չեխիա ³⁹	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
Ֆրանսիա ⁴⁰	✓	✓	✓	✓	✓				✓			✓
Գերմանիա ⁴¹	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓
Մեծ Բրիտանիա ⁴²	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓
Հունգարիա ⁴³	✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓	✓		✓
Հնդկաստան ⁴⁴		✓			✓	✓	✓		✓			✓
Իրան ⁴⁵					✓	✓			✓			✓
Լեհաստան ⁴⁶	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓

Ինչպես տեսնում ենք, Իրանում դեռևս ՏԻՄ-երն օժտված են բավական փոքր լիազորություններով. նրանց չեն վերապահվում այնպիսի կարևոր լիազորություններ, ինչպիսիք են նախադպրոցական և դպրոցական կրթությունը, սոցիալական ապահովությունը, կոմունալ ծառայությունները և այլն: Այս հանգամանքը առավել մանրանասն կմեկնաբանենք ատենախոսության վերջին գլխում:

Արենախոսության երրորդ գլխում ներկայացվում են ՏԻՄ առանձնահատկությունները ԻԻՀ-ում և Թեհրանում, Թեհրան քաղաքի ամենամեծ և ամենափոքր բնակչություն ունեցող վարչական շրջաններում իրականացված հարցման հիման վրա՝ բացահայտվում են Թեհրանի ՏԻՄ-երի առավելություններն ու թերությունները, ինչպես նաև «ծախս-արդյունք» մեթոդի կիրառմամբ ներկայացվում են Թեհրանի ՏԻՄ-երի կողմից ոչ արդյունավետ ծախսային հոդվածները և առաջարկվում են Թեհրան քաղաքի ՏԻՄ-երի գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումներ: Իրանի Իսլամական Հանրապետության հիմնական վարչատարածքային միավորը՝ նահանգն է, որը ղեկավարում է նահանգապետը: Միապետության ժամանակ նահանգապետին նշանակում էր շահը, իսկ այսօր՝ Ներքին Գործերի

³⁷ Երկրների ընտրությունը կատարվել է այնպես, որ ներկայացված լինեն ՏԻՄ 3 մոդելներից յուրաքանչյուրի հետևորդներ և իրենց վարչատարածքային կազմում ունենան խոշոր քաղաքներ (երբ քաղաքի բնակչությունը 500000-ից ավելին է, այն համարվում է խոշոր՝ աղբյուրը՝ <http://www.demographia.com/db-worldua.pdf>, էջ 3)

³⁸ Tindal, C. Richard and Susan Nobes Tindal. Local Government in Canada, Toronto: Nelson Thomson, 2000, p.29

³⁹ Schuster W., Vallier F., Local and regional government in Europe-Structures and competences, CCRE&CEMR-2013, p.13

⁴⁰ Schuster W., Vallier F., Local and regional government in Europe-Structures and competences, CCRE&CEMR-2013, p.19-20

⁴¹ Schuster W., Vallier F., Local and regional government in Europe-Structures and competences, CCRE&CEMR-2013, p.22-23

⁴² Schuster W., Vallier F., Local and regional government in Europe-Structures and competences, CCRE&CEMR-2013, p.52-53

⁴³ Schuster W., Vallier F., Local and regional government in Europe-Structures and competences, CCRE&CEMR-2013, p.25

⁴⁴ Rumi Aijaz, Challenges for Urban Local Governments in India, Asia Research Centre Working Paper 19, 2007, p. 10-13,

⁴⁵ Mohammad Hachemi, Mohammad Djalali, United Cities and Local Government, Country profile: Iran, 2007, p. 5-7 /all 7pp.

http://www.cities-localgovernments.org/gold/Upload/country_profile/Iran.pdf/

⁴⁶ Schuster W., Vallier F., Local and regional government in Europe-Structures and competences, CCRE&CEMR-2013, p.37-38

Նախարարությունը և դա հաստատում է երկրի նախագահը: Օստանները վերին մակարդակի վարչատարածքային միավորներ են, դրանք իրեն հերթին բաժանվում են 324 շրջանների (շրջանների, որոնց ղեկավարը շրջանի քաղաքական ղեկավարներն են), իսկ վերջիններս էլ՝ ավելի քան 865 ավանների, որոնց ղեկավարը ավանի ղեկավարներն են: Սահմանադրության համաձայն⁴⁷ յուրաքանչյուր վարչական մակարդակում գտնվող գործադիր իշխանությունը գտնվում է համապատասխան վարչական միավորի խորհրդի վերահսկողության ներքո: Յուրաքանչյուր խորհուրդ ընտրվում է տեղի բնակչության կողմից 4 տարի ժամկետով: Համաձայն Սահմանադրության 7-րդ հոդվածի՝ դրանք հանդիսանում են գործադիր և վարչական մարմիններ⁴⁸: Սկսած 1999թ.-ից տեղական ինքնակառավարման համակարգը ձևավորվում է ընտրական ճանապարհով: 2014թ. ներկայացվեց Իրանի վարչատարածքային բաժանման բարեփոխումների ծրագիրը, համաձայն որի իրականացվում է վարչատարածքային միավորների խոշորացում: Ըստ այդ ծրագրի՝ Իրանը պետք է բաժանված լինի 5 մանտագենների (շրջանների), որոնք իրենց մեջ կմիավորեն նախկին նահանգները: 2014թ. ներկայացվեց Իրանի վարչատարածքային բաժանման բարեփոխումների ծրագիրը, համաձայն որի իրականացվում է վարչատարածքային միավորների խոշորացում: Ըստ այդ ծրագրի՝ Իրանը պետք է բաժանված լինի 5 մանտագենների (շրջանների), որոնք իրենց մեջ կմիավորեն նախկին նահանգները:

Այդուհանդերձ, ներկայացնենք Իրանի տեղական ինքնակառավարման մարմինների այս կամ այն ոլորտում ունեցած գործառնությունները՝ դասակարգելով դրանք ըստ դրանց իրագործման տեսանկյունից տեղական ինքնակառավարման մարմինների ունեցած իրավասությունների: Ըստ այդմ դրանք դասակարգվում են՝

- առաջնային իրավասությունների, որն իրենից ենթադրում է որոշումների կայացում տվյալ ոլորտում և գործառնության իրականացում (փողոցների լուսավորություն, հանրային տրանսպորտ, թափոնների հավաքում և հեռացում, այգիների, զվարճանքի վայրերի, խանութների, սպանդանոցների, գերեզմանոցների սպասարկում),
- երկրորդային իրավասությունների, որն իրենից ենթադրում է տվյալ ոլորտում վերահսկողություն և խորհրդատվություն (վարչական և վերահսկողական գործություն, տնտեսական զարգացում, կոմունալ ծառայությունների ոլորտի զարգացում, առողջապահություն, բնակարանաշինություն, մայրուղիների և ճանապարհների սպասարկում և հրշեջ ծառայություն),
- իրավասության բացակայություն:

Անդրադառնալով Թեհրանի վարչատարածքային բաժանմանը՝ նշենք, որ դրա մեծ մասը գտնվում է Թեհրան շախրեստանի վրա: Ներկայումս Թեհրանը բաժանված է 22 քաղաքային շրջանների⁴⁹: Թեհրան քաղաքի տեղական

⁴⁷ ԻԻՀ Սահմանադրություն՝ <http://www.moi.ir/portal/Home/Default.aspx?CategoryID=3f0b662e-3527-4107-98ee-d58ff64c8b0c>

⁴⁸ ԻԻՀ Սահմանադրություն, հոդված 7՝ <http://www.moi.ir/portal/Home/Default.aspx?CategoryID=3f0b662e-3527-4107-98ee-d58ff64c8b0c>

⁴⁹ <http://www.citypopulation.de/php/iran-tehrancity.php>

ինքնակառավարումը ինչպես և ողջ ԻԻՀ տարածքում բաժանված է երկու մարմինների միջև՝ օրենսդիր մարմնի՝ խորհրդի և գործադիր մարմնի՝ քաղաքապետի և քաղաքապետարանի կողմից: Թեհրանի կառավարումն իրականացվում է Թեհրանի իսլամական քաղաքային խորհրդի կողմից, որը բաղկացած է 15 պատգամավորից: Պատգամավորներն ընտրվում են ժողովրդի կողմից 4 տարի ժամկետով:

Իրանում ՏԻՄ բյուջեի եկամուտները ձևավորվում են 9 հիմնական աղբյուրներից, որոնք ներկայացված են աղյուսակ 3.1.2-ում:

Աղյուսակ 3.1.2. Իրանի ՏԻՄ բյուջեի եկամտային հոդվածները

Եկամտային հոդվածի կոդը	Ֆինանսավորման աղբյուրը	Թեհրան վարչական շրջանում միջին տոկոսային բաշխվածությունը
10	Ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող հատկացումներ	0%
20	Տեղական հարկեր և վճարներ	1%
30	Շինությունների և հողի համար գանձվող վճարներ	53%
40	Կապի և տրանսպորտի համար գանձվող վճարներ	5%
50	Շինարարության թույլտվության համար գանձվող վճարներ	4%
60	Ծառայությունների զեղչերից և սպառողների կողմից իրավախախտումների համար վճարվող գումարներ	11%
70	Տույժերից և տուգանքներից և մուսիցիկալ հաստատություններից ստացվող եկամուտ	25%
80	ՏԻՄ սեփականության վարձույթից ստացվող եկամուտ	1%
90	Գրանտեր, նվիրատվություններ, փոխառություններ, նախորդ հաշվետու տարվանից փոխանցված հաշվեկշիռ	0%

Թեհրան քաղաքում ՏԻ գործունեությունից բնակչության բավարարվածության աստիճանը բացահայտելու նպատակով մենք հարցումներ ենք իրականացրել Թեհրանի ամենաշատ և ամենաքիչ բնակչություն ունեցող վարչական շրջաններում, որոնց արդյունքները ռանգավորել և ներկայացրել ենք աղյուսակ 3.3.1-ում:

Աղյուսակ 3.3.1. ՏԻ իրավասության տակ գտնվող առաջնային և երկրորդային գործառույթների ռանգավորումը՝ ըստ դրանցից բնակչության բավարարվածության աստիճանի⁵⁰



Գործառույթներ	4-րդ շրջան	22-րդ շրջան
Առաջնային գործառույթներ		
ՏԻՄ աշխատանքների կազմակերպում (վարչական գործառույթ) ⁵¹	8	2
Հանրային տրանսպորտի ոլորտի սպասարկում	4	4
Փողոցների լուսավորություն	2	1
Կանաչապատում, այգիների և զվարճանքի վայրերի սպասարկում	9	3
Աղբահանություն, թափոնների հավաքում և հեռացում	3	1
Գերեզմանոցների սպասարկում	7	8
Սպանդանոցների, խանութների սպասարկում	2	1
Երկրորդային գործառույթներ		

⁵⁰ “1” ռանգ ստանում է այն գործառույթը, որից բնակչության բավարարվածության աստիճանն ամենամեծն է, ըստ բավարարվածության աստիճանի նվազման՝ համապատասխանաբար ստանում են “2”, “3” և այլն ռանգեր:

⁵¹ Այս գործառույթից բավարարվածության աստիճանը հաշվարկվում է՝ ըստ 3.2.1 աղյուսակում ներառված 6-րդ հարցի վերջին չորս ենթահարցերի միջին թվաբանականի

Ճանապարհների սպասարկում	6	6
Հրշեջ ծառայություն	10	7
Բնակարանաշինություն	5	5
Առողջապահություն (սանիտարականի ծառայություն)	1	1

Գծապատկեր 3.3.1-ում և 3.3.2-ում ներկայացված են համապատասխանաբար 4-րդ և 22-րդ վարչական շրջանների ՏԻ-ի 2010-2014թթ. միջին հաշվով կատարած ծախսերի մեծությունները: Գծապատկերի ներքևի մասում ներկայացված է տվյալ գործառույթի իրականացումից բնակչության բավարարվածության աստիճանը՝ ըստ ռանգի և տրված է համապատասխան գունավորում՝ համաձայն ատենախոսության 2.1 ենթագլխի 2.1.1 աղյուսակում մեր կոմից առաջարկված տարբերակի:



Գծապատկեր 3.3.1. Թեհրանի 4-րդ և 22-րդ վարչական շրջանների ՏԻ գործունեության ծախսերի և արդյունքի համադրություն

Փաստորեն, ինչպես և 4-րդ շրջանի վերլուծության պարագայում, այնպես էլ 22-րդ վարչական շրջանում միակ կտրուկ անհամապատասխանությունը ծախս-արդյունք համադրության ժամանակ արձանագրվում է գերեզմանոցների սպասարկման գործառույթի իրականացման պարագայում, երբ զգալիորեն մեծ ծախսերի դիմաց արձանագրվում է բնակչության բավարարվածության բավական ցածր մակարդակ՝ ի համեմատ մյուս գործառույթների:

Ատենախոսության՝ «**Եզրակացություն**» բաժնում ներկայացվում են աշխատանքի հիմնական արդյունքները, որոնք ամփոփված են ստորև:

- Մասնագիտական գրականության վերլուծության, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ խոշոր քաղաքային համայնքներում տեղական ինքնակառավարումն ունի իր ուրույն առանձնահատկությունները:

Վերլուծելով ԻԻՀ և Թեհրանի ՏԻ գործունեությանը՝ մենք հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ընտրական եղանակով ձևավորվող ՏԻՄ-երը ինչպես ողջ ԻԻՀ տարածքում այնպես էլ մայրաքաղաք Թեհրանում բավական նոր երևույթ են:
- ՏԻ լիազորությունների շրջանակը դեռևս շատ փոքր է:
- ինչպես ԻԻՀ, այնպես էլ Թեհրանի ՏԻՄ բյուջեի եկամուտների հիմնական մասն ապահովվում է շինությունների և հողի համար գանձվող վճարներից:
- կենտրոնական կառավարության կողմից ՏԻ-ին տրամադրվող տրանսֆերտները զգալիորեն տարբերվում են ԻԻՀ մեծ և փոքր

քաղաքներում. որպես կանոն մեծ քաղաքներին տրամադրվող տրանսֆերտների խնայման միջոցով ֆինանսավորվում են փոքր քաղաքների ՏԻՄ-երը. Իրանի բոլոր ՏԻՄ-երը կենտրոնական կառավարությունից ստանում են միջին հաշվով բյուջեի եկամուտների 30%-ի չափով տրանսֆերտներ: Ընդ որում, Թեհրան վարչական շրջանին տրամադրվող տրանսֆերտները կազմում են մոտ 9%, իսկ ԻԻՀ ՏԻՄ-երին (առանց Թեհրանի) տրամադրվող տրանսֆերտների գումարը ավելին է, քան ՏԻՄ բյուջեի 40%-ը:

- ԻԻՀ և Թեհրանի ՏԻՄ բյուջեի եկամուտների մեջ ամենամեծ մասնաբաժինն ունի «Շինությունների և հողի համար գանձվող վճարներ» եկամտային հոդվածը: ԻԻՀ ՏԻՄ-երում մեծությամբ հաջորդ հոդվածները «Շինարարության թույլտվության համար գանձվող վճարներ» և «Ծառայությունների գեղչերից և սպառողների կողմից իրավախախտումների համար վճարվող գումարներ» հոդվածներն են, իսկ Թեհրան վարչական շրջանում՝ «Տույժերից և տուգանքներից և մունիցիպալ հաստատություններից ստացվող եկամուտ» և «Ծառայությունների գեղչերից և սպառողների կողմից իրավախախտումների համար վճարվող գումարներ» հոդվածները: ԻԻՀ ՏԻՄ բյուջեի եկամուտներում մյուս հոդվածների մասնաբաժինը ՏԻՄ բյուջեի եկամտային մասում չի գերազանցում 10%-ը, իսկ Թեհրան վարչական շրջանում՝ 5%-ը:
- ԻԻՀ և Թեհրան վարչական շրջանի ՏԻՄ բյուջեների ծախսային հոդվածները բաշխված են գրեթե նույն համամասնությամբ՝ 33-34%՝ ՏԻՄ մարմնի գործունեության հետ կապված ծախսեր, 66-67%՝ վարչական շրջանի զարգացման համար նախատեսված ծախսեր:

Թեհրանի ՏԻ գործունեության արդյունավետությունը բացահայտելու նպատակով մեր կողմից հարցումներ են իրականացվել ամենամեծ և ամենափոքր բնակչություն ունեցող վարչական շրջաններում, համաձայն որի.

- Այն գործառույթների մասով, որոնք սովորաբար վերագրվում են ՏԻ-ին, սակայն Իրանում դրանք դեռևս վերապահված են կենտրոնական կառավարությանը, հիմնականում բնակչության բավարարվածության գնահատականը շատ ավելի ցածր է, քան Թեհրանի ՏԻ-ին վերագրված գործառույթների մասով: Բացառություն է կազմում միայն ամենամեծ բնակչություն ունեցող շրջանում հրդեհաշիջման աշխատանքներից բավարարվածության գնահատականը:
- ՏԻ գործունեությունից բավարարվածության գնահատականը հիմնականում գրեթե նույնն է դիտարկվող շրջաններում, ինչը վկայում է, որ շրջանի բնակչության թվաքանակն էականորեն չի ազդում ՏԻ գործունեության արդյունավետության վրա, ուստի որոշ շրջանները միավորելուն ուղղված կառավարության միտումը կարող է և արդարացված լինել այն հիմնավորմամբ, որ այս եղանակով կխնայվեն ՏԻ գործունեության վարչական աշխատանքների իրականացմանն ուղղված ծախսերը և դրանք կտրամադրվեն առավել հրատապ հարցերի լուծմանը:

- Զգալի տարբերություն դիտարկվող շրջաններում ՏԻ գործունեության բավարարվածությունից նկատվում է միայն հրդեհաշիջման աշխատանքների բավարարվածությունից, այն էլ հատկապես՝ հրդեհների և այլ աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացման ոչ բավարար մակարդակի արդյունքում, ինչն էլ պայմանավորված է ՏԻՄ ֆինանսական միջոցների սղությամբ:

- Վերլուծության ընթացքում միակ խնդիրը, որ նկատվել է բնակչության մեծ թվաքանակի պատճառով այն է, որ ամենամեծ բնակչություն ունեցող շրջանում արագընթաց ավտոբուսների ավելի լայն ցանցի ներդրման անհրաժեշտություն է առաջանում: Սակայն այս խնդիրը չի կարող հիմք հանդիսանալ շրջանների միավորման դեմ որոշում կայացնելու համար:

Հարցման արդյունքում հայտնաբերված ՏԻ գործունեության հետ կապված խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք իրականացնել հետևյալ միջոցառումները.

- նախադպրոցական հաստատությունների սննդի վերահսկողության գործառույթը կենտրոնական կառավարությունից փոխանցել ՏԻՄ-երին,
- իրականացնել տրանսպորտային ոլորտի որոշակի բարեփոխումներ՝ արագընթաց ավտոբուսների գծերի ավելացման, հեծանվուղիների պիլոտային ծրագրի շարունակականության ապահովման միջոցով,
- ներդնել հաղորդակցման էլեկտրոնային եղանակների՝ ՏԻ-հասարակություն հաղորդակցման առավել խոր մակարդակ ապահովելու նպատակով:
- կրճատել գերեզմանոցների սպասարկման նպատակով իրականացվող ծախսերը՝ ընդհուպ մինչև այդ գործառույթի իրականացումը փոխանցելով մասնավոր կազմակերպության,
- ծախսերի այդ խմբաքանակը վերաբաշխել՝ մյուս գործառույթների իրականացման նկատառումներով հետևյալ կերպ. գերեզմանոցների սպասարկման հոգվածով ծախսվող գումարները հատկացնել հրշեջ ծառայությունների, մասնավորապես հրդեհի և այլ աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացմանը, կանաչապատման և վարչական գործառույթների իրականացմանը, որոնցից բնակչության բավարարվածությունը համեմատաբար ցածր է ոչ բավարար ծախսերի արդյունքում:

Հայտնի է, որ ներկայումս արդեն Թեհրանի ՏԻՄ-երի մի զգալի հատված կանգնած է սնանկացման եզրին: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ՏԻՄ-երի այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ձևավորման՝ հետագայում նման իրավիճակից խուսափելու համար: Այդ նպատակով մեր կողմից Թեհրան քաղաքի ՏԻՄ-երը բաժանվել են 4 խմբի՝ ըստ իրենց ֆինանսական վիճակի, և նշվել է դրանցից յուրաքանչյուրի համար ճգնաժամային իրավիճակից դուրս գալու կամ լրացուցիչ ֆինանսավորման հնարավոր աղբյուր:

Առաջին տարբերակի դեպքում, երբ ՏԻՄ-ը սնանկ է, առաջարկում ենք լուծման երկու տարբերակ.

- երբ ՏԻՄ-ը սնանկացել է իր շարունակական անարդյունավետ գործունեության արդյունքում, պետք է Ներքին գործերի նախարարության

կողմից և քաղաքային խորհրդի որոշմամբ՝ ՏԻՄ գործունեությունը դադարեցվի՝ տվյալ վարչական շրջանը միավորելով մոտակա այլ վարչական շրջանի հետ:

- երբ ՏԻՄ-ը սնանկացել է իր գործունեության ցածր արդյունավետության և շրջակա միջավայրում տնտեսական վիճակի (օրինակ՝ բարձր գնաճ և այլն) զգալի փոփոխության համադրության արդյունքում, սակայն դեռևս հնարավոր է որոշակի օգնության պարագայում սնանկության վիճակի հաղթահարում և ՏԻՄ գործունեության արդյունավետության բարձրացում, ՏԻՄ- պետք է զրկվի սեփական բյուջեից և իրավասություններից՝ փոխանցելով դրանք Ներքին գործերի նախարարությանը, որը և կհավաքագրի ու կստանա ՏԻՄ բյուջեի բոլոր ակնկալվող եկամուտները, սակայն պահպանելով պարտավորությունների հատվածը, որոնց իրականացման համար ֆինանսավորումը կիրականցնի Ներքին գործերի նախարարությունը:

Երկրորդ տարբերակի պարագայում, երբ ՏԻՄ-ը դեռևս չի սնանկացել, սակայն նկատվում է սնանկացման վտանգ, անհրաժեշտ է պետականորեն ներդնել «Անվճարունակ ՏԻՄ-ի ապահովագրության» համակարգ, որն իրենից ենթադրում է բոլոր ՏԻՄ-երի կողմից տարեկան պարտադիր ապահովագրավճարների կատարում, որոնց արդյունքում էլ կֆինանսավորվեն սնանկացման վտանգ ունեցող և առողջացման ծրագիր ներկայացրած ՏԻՄ-երը:

Երրորդ տարբերակի պարագայում, երբ ՏԻՄ-ի գործունեությունը համարվում է առողջ և կայուն և ՏԻՄ-ը իր արդյունավետ գործունեության արդյունքում կարողանում է բյուջեի եկամուտներով ապահովել անհրաժեշտ ծախսերը, սակայն արտաքին պայմանների կտրուկ փոփոխման պարագայում (գնաճ և այլն) լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն է առաջանում: Այս դեպքում առաջարկում ենք ՏԻՄ կողմից պարտատոմսերի թողարկում, որը հնարավորություն կտա անհրաժեշտ միջոցներ ներգրավել ոչ միայն պետական բյուջեից, այլև բնակչության որոշակի հատվածից:

Չորրորդ տարբերակի դեպքում, երբ գործ ունենք առողջ և զարգացող ՏԻՄ-ի հետ, որպես ՏԻՄ բյուջեի ձևավորման այլընտրանքային աղբյուր առաջարկում ենք հատուկ հիմնադրամի ստեղծում, որը կֆինանսավորի ՏԻՄ այնպիսի վենչուրային ծրագրեր, ինչպիսիք են, օրինակ՝ շրջանի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով տարբեր երկրների կողմից ներկայումս կիրառվող էլեկտրոնային և բջջային հավելվածների ստեղծումը և հասարակություն-ՏԻՄ համագործակցության էլեկտրոնային հարթակի ապահովումը:

Այսպիսով, ամփոփելով վերլուծությունը՝ նշենք, որ Թեհրանում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումն ընտրական ճանապարհով բավական նոր երևույթ է և դեռևս կարիք ունի զգալի բարեփոխումների: Կարծում ենք՝ առաջարկված միջոցառումներն օգտակար կլինեն ՏԻՄ գործունեության հետագա բարելավմանն ուղղված քաղաքականություն մշակելիս:

Ատենախոսությունում ստացված արդյունքները ամփոփված են հեղինակի կողմից հրատարակված 6 հոդվածներում.

1. Մասուդ Էնթեզարի Յազդի, Արդյունավետ ղեկավարման մոդելի սահմանումը Մաշհադի քաղաքապետարանում, Կառավարման և տնտեսության զարգացմանը նվիրված 2-րդ միջազգային գիտաժողով, Իրան Մաշհադ, փետրվար 4, 2016թ. էջ 114-123,
2. Մասուդ Էնթեզարի Յազդի, Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վրա ազդող գործոնները միջազգային համատեքստում, «Այլընտրանք», Գիտական հանդես #1, Հունվար -մարտ, 2016թ., էջ 550-561,
3. Մասուդ Էնթեզարի Յազդի, Տեղական ինքնակառավարման արդյունավետության տեսամեթոդական հիմքերը, Այլընտրանք», Գիտական հանդես #1, հունվար-մարտ, 2016թ., էջ 390-399
4. Մասուդ Էնթեզարի Յազդի, Թեհրանի ՏԻՄ բյուջեի ձևավորման այլընտրանքային աղբյուրները, «Այլընտրանք», Գիտական հանդես #2, ապրիլ-հուլիս, 2016թ., էջ 390-396
5. Մասուդ Էնթեզարի Յազդի, ՏԻՄ գործառույթները ԻԻՀ-ում և այլ խոշոր քաղաքներում, «Այլընտրանք», Գիտական հանդես #3, Հուլիս- սեպտեմբեր, 2016թ., էջ 228-232
6. Մասուդ Էնթեզարի Յազդի, Խոշոր քաղաքային համայնքներում տեղական ինքնակառավարման համակարգերի համեմատական վերլուծություն. «Այլընտրանք», Գիտական հանդես, #4, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2016թ., էջ 311-316
7. Մասուդ Էնթեզարի Յազդի, Թեհրանի ամենամեծ և ամենափոքր բնակչություն ունեցող շրջաններում ՏԻՄ գործունեությունից բնակչության գոհունակության աստիճանի վերլուծությունը, Ֆինանսներ և էկոնոմիկա, 2016, 3-4(187-188), էջ 99-102

МАСУД ЭНТЕЗАРИ ЯЗДЫ
ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В
ГОРОДСКИХ АГЛОМЕРАЦИЯХ(НА ПРИМЕРЕ ТЕГЕРАНА)

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - “Экономика и управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится на заседании специализированного совета 015 по экономике ВАК РА при экономическом факультете ЕГУ 7-ого июля, 2017 года в 13:30 часов по адресу: г. Ереван 0009, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

В Конституциях разных стран, как правило, определены органы, ответственные за административный контроль и управление административными подразделениями и устанавливается их роль и обязанности.

Создание системы местного самоуправления с помощью выборов- новое явление в Исламской Республике Иран (ИРИ) и, в частности, в Тегеране. Это явление требует очень тщательного изучения.

До сегодняшнего дня в городе Тегеран неоднократно проводились мероприятия по консолидации и разделению районов для повышении эффективной деятельности органов местного самоуправления. Тем не менее, в наши дни городская агломерация Тегерана сталкивается с новой проблемой- более половины органов местного самоуправления находятся на грани банкротства.

Таким образом, необходимо как можно скорее провести анализ деятельности органов местного самоуправления в городе Тегеран, чтобы выявить недостатки их деятельности, раскрыть причины их неэффективной работы и разработать способы их устранения, а также предложить возможные будущие направления для их дальнейшего развития.

Целью данной работы является: выявление путей совершенствования местного самоуправления в крупных городских агломерациях и предложение путей улучшения работы органов местного самоуправления Тегерана.

Для достижения этих целей были поставлены следующие задачи:

- изучить теоретические основы системы местного самоуправления,
- анализировать факторы, влияющие на местное самоуправление,

- провести сравнительный анализ деятельности органов местного самоуправления в 30 крупнейших городах,
- выявить методы эффективной деятельности органов местного самоуправления в крупных городах,
- анализировать особенности деятельности местных органов власти и Исламской Республики Иран в Тегеране,
- оценить степень удовлетворенности населения от деятельности органов местного самоуправления в Тегеране,
- оценить деятельность местных органов власти в Тегеране, на основе сопоставления затрат и результатов от расходования.

Научная новизна данного исследования состоит в следующем:

- На основе обзора литературы была выбрана методология проведения социологического опроса для выявления уровня удовлетворенности населения от деятельности органов местного самоуправления. Для более точного выявления эффективности деятельности органов местного самоуправления Тегерана, данная методология была улучшена с учетом особенностей органов местного самоуправления в Тегеране.
- Был проведен социологический опрос для оценки удовлетворенности местного населения от деятельности органов местного самоуправления Тегерана и определена эффективность их деятельности в районах города с наибольшим и с наименьшим населением. В результате чего были предложены пути дальнейшего совершенствования функционирования органов местного самоуправления Тегерана.
- В районах с наибольшим и с наименьшим количеством населением Тегерана были выявлены взаимосвязь между расходами бюджета местного самоуправления и степени удовлетворенности местного населения и были рекомендованы меры для регулирования неэффективных операций со стороны органов местного самоуправления.
- Учитывая потребность в альтернативных источниках доходов бюджета органов местного самоуправления Тегерана, были разделены органы местного самоуправления Тегерана на основе их финансового положения и были разработаны альтернативные методы и инструменты финансирования для каждого из них.

В результате проведенных в диссертации исследований и анализов, предложены пути повышения эффективности деятельности органов местного самоуправления.

MASOUD ENTEZARI YAZDI
THE WAYS OF IMPROVING ACTIVITY OF LOCAL SELF-GOVERNMENT IN
URBAN AGGLOMERATIONS (THE CASE OF TEHRAN)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in Economics in the Field of “Economy and management of the economy, its branches” 08.00.02. The Defense of the Dissertation will take place at 13:30 on July 7th, 2017, at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan St., Yerevan, 0009, Armenia.

SUMMARY

In different countries, as a rule, the Constitution defines the institutions responsible for the administrative control and management of administrative units and establishes their roles and responsibilities.

The creation of a local government system through elections is a new phenomenon in the Islamic Republic of Iran (IRI) and, in particular, in Tehran. This phenomenon requires for a very careful study.

Until now, in the city of Tehran, several measures have been taken to consolidate and divide the regions to enhance the effective operation of local self-government. Nevertheless, today the urban agglomeration of Tehran faces a new problem - more than half of local governments are on the verge of bankruptcy. Thus, it is necessary to conduct an analysis of local government activities in Tehran as soon as possible in order to identify shortcomings in their activities, to uncover the causes of inefficiency and to develop ways of eliminating them, and to suggest possible future directions for further development.

The main objective of the dissertation is to identify ways to improve local government in large urban agglomerations and suggest ways to improve the work of local government in Tehran.

To achieve these goals, the following tasks were set:

- study the theoretical foundations of the local government system,
- analyze the factors affecting local self-government,
- Conduct a comparative analysis of the activities of local governments in 30 major cities,
- to identify methods of effective activity of local self-government bodies in large cities,

- analyze the features of the activities of local authorities and the Islamic Republic of Iran in Tehran,
- estimate the degree of people's satisfaction with the activities of local government in Tehran,
- estimate the performance of local authorities in Tehran, based on a comparison of costs and results from expenditure.

The scientific novelty and main results of the dissertation: The main results and concepts supporting the scientific novelty of the dissertation are the following:

- Based on the review of the literature, a methodology was chosen to conduct a sociological survey to determine the level of people's satisfaction with the activities of local government. To more accurately identify the effectiveness of local government in Tehran, this methodology has been improved taking into account the specifics of local government in Tehran.
- A sociological survey was conducted to assess the satisfaction of the local population from the activities of local government in Tehran and determine the effectiveness of their activities in the areas with the largest and the smallest population of Tehran. As a result, ways were proposed to further improve the functioning of the local government of Tehran.
- In the regions with the largest and least population of Tehran, the correlation between the expenditures of the local government budget and the level of satisfaction of the local population was revealed, and measures were recommended to regulate inefficient operations of the local self-government bodies.
- Taking into account the need for alternative sources of budget revenues for Tehran's local government bodies, Tehran's local governments were divided on the basis of their financial situation and alternative methods and financing instruments were developed for each of them.

As a result of research and analysis carried out in the dissertation, the proposed ways of increasing the effectiveness of local self-government bodies.

